ՀՀ ԿԳՄՍՆ

<< ԵՐԵՎԱՆԻ ԼԵՈՅԻ ԱՆՎԱՆ Հ. 65 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ՝ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆԵՐ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Միջառարկայական կապեր և ընդհանրական հասկացություններ, դրանց կիրառությունը <<Մայրենի>>,<<Հայոց լեզու>>, <<Գրականություն>> և <<Հայ գրականություն>> առարկաների դասերին , ինտեգրված դասերի կազմակերպումը:

Ուսուցիչ՝ Մարջան Մեհրաբյան/ Ավշարի միջնակարգ դպրոց/

Ղեկավար՝ Քրիստինե Աբրահամյան

Երեվան2022

Բովանդակություն

1.Ներածություն.....3

2.Ինտեգրված ուսուցման նպատակները.....4

3.Ինչ է տալիս միջառարկայական կապերի կիրառումը.....5

4. Ընդհանրական և խաչվող հասկացություններ.....6

5. Ինտեգրված դասի պլանավորումը.....7

6. Միջառարկայական կապերի ապահովումը Մայրենի ,Հ. լեզու, Հայ գրականություն առարկաների դասերին.....8

7. Եզրակացություն.....19

8. Գրականության ցանկ.....20

1.Ներածություն

<<Առարկաների միջև եղած կապը երեխաներին սովորեցնում է բացահայտել, ուսումնասիրել աշխարհը և նրա բազմազան երևույթները և, որ ամենակարևորն է, կապ ստեղծել այդ ամենի միջև>>:

Յու. Ա. Կոմենսկի <<Մեծ դիդակտիկա>>[1]

Հենց այս առաջնայնությունից ելնելով է գիտամանկավարժության հիմնադիր Կոմենսկին կարևորում ինտեգրված դասերի հիմքում ընկած միջառարկայական կապը: Այսինքն՝ երբ ուսոցումը կատարվում է կապերի միջոցով, ավելի տեսանելի և ընկալելի են դառնում պատճառները, հասկանալի՝ հետևանքները:

Արդի դպրոցի կրթական չափորոշիչները ընձեռում են լայն հնարա- վորություն՝ ինտեգրված ուսուցման շնորհիվ հասնելու համակողմանի վերջնարդյունքի՝ երևույթի ընկալում, գիտակցում, յուրացում, կիրառում և արժևորում, ասել է թե կարողունակությունների զարգացում:

Ինտեգրումը (integer-ամբողջ) լատիներեն բառ է, որ նշանակում է վերականգնում, համալրում, մասերի միավորում մեկ ամբողջի մեջ: Այն մեկ առարկայից գիտելիք է հաղորդում՝ հիմնվելով և փոխկապակցվելով այլ առարկայի կամ առարկաների հետ:

Համալիր գիտելիքների հաղորդումը խթանում է աշակերտի ճանաչողական գործունեությունը, քննական-վերլուծական մտածողությունը, ստեղծագործական միտքը, և վերջնարդյունքում սովորողը կկարողանա համադրել-համեմատել և համակողմանի մոտեցմամբ լուծումներ գտնել:Հայոց լեզվի և գրականության

1. Յու. Ա. Կոմենսկի <<Մեծ դիդակտիկա>>

դասերը լայնորեն նպաստում են աշակերտների մոտ լեզվական, մշակութային, ինքնաճանաչողական կարողունակությունների ձևավորմանը՝ հաճախ փոխկապակցվելով ուսուցանվող մյուս առարկաների հետ:

2. Ինտեգրված ուսուցման նպատակները

Ինտեգրված դասը դասի հատուկ տեսակ է, որն իր մեջ ներառում է մեկ հատուկ հասկացության ուսուցման ժամանակ մի քանի առարկաների միաժամանակյա ուսուցում: Այն պահանջում է յուրօրինակ նախապատրաստություն, տարբեր առարկաների մասնագետների ուժերի համատեղում, բազմազանության ներդաշնակում՝ հանուն հետաքրքիր, բովանդակալից և բազմակողմանի գիտելիքներ ապահովող վերջնարդյունքի: Այս առումով կարևորվում են ուսուցման

ա)բովանդակությունը

բ) համագործակցային հմտությունների առկայությունը

գ)կազմակերպելու, հետազոտական հմտություններ դրսևորելու կարողությունը,

դ)Ստեղծագործական մտածողությունը և բացահայտումներ կատարելու կարողությունը (պատրաստակամությունը):

Ինտեգրված դասերը բացահայտումների, ինքնարտահայտման և ինքնադրսևորման են մղում նաև ուսուցչին, որը և նպաստում է աշակերտի կատարողունակությունների լիարժեք դրսևորմանը:

ՈՒսումնական ծրագրի ինտեգրման գործընթացին բնորոշ է 4 հիմնական գիծ.

1. Աշակերտը և ուսուցիչը համատեղ պլանավորում են ուս. ծրագիրը և դրա իրագործման կարգը:

2. ՈՒսումնառության հիմքը թեմաներն են:

3. ՈՒսումնառությունն ընթանում է ժողովրդավարական սկզբունքով:

4. ՈՒսոիմնական ծրագիրը այլևս կազմված չէ առանձին առարկաներից:[2]

Հայոց լեզվի և գրականության դասերի ընթացքում որպես ինտեգրիչ առարկա առաջատարը միշտ մնում են հ. լեզուն և գրականությունը՝ իրենց ուսուցման մեթոդներով և բովանդակությամբ: Չնայած իրենց արդյունավետությանը՝ այսպիսի դասեր ոչ հաճախ են կազմակերպվում՝ ելնելով աշխատանքի ծավալից, բազմատարրությունից, նյութատեխնիկական հնարավորության սղությունից, այլևայլ պատճառներից: Միչնդեռ հենց այս տիպի դասերն են ընդլայնում աշակերտի մտահորիզոնը, ոգեշնչում համեմատության մեջ աշխարհը ճանաչելու և նոր բացահայտումների գնալու մղումով :

Նմանատիպ դասերին կարող են հաջորդել հետաքրքիր և ինքնատիպ նախագծեր:

3. Ինչ է տալիս միջառարկայական կապերի կիրառումը

Նոր կրթակարգի հիմնական առանձնահատկություններից է յուրաքանչյուր աշակերտի եզակիության, ինքնատիպության և պահանջմունքների կարևորումը, ուստի այն պետք է լինի ինտեգրող և հետազոտության մղող:

Այս առումով առանձնանում են հատկապես այն դասերը, որոնք ապահովում են միջառարկայական կապերի առկայություն: Այս կապերի կիրառումը

1. զարագացնում է աշակերտների գիտելիքները, հմտությունները և վերաբերմունքը ուսումնասիրվող նյութի հանդեպ,

2. կապ է ստեղծում ուսումնական առարկաների միջև,

2. Դավթյան <<Ինտեգրված ուսուցում>> 2007:էջ 58-59

3. բացահայտում է աշակերտների և ուսուցչի նախաձեռնողականությունը,

4. ապահովում է աշակերտի քննադատական և ստեղծագործական մտածողության զարգացումը,

5. բացի դասագրքերից կիրառվում են նաև այլ աղբյուրներ,

6. ապահովում է գնահատում և ինքնագնահատում,

7. կապ է հաստատում տարբեր հասկացությունների միջև:

4. Խաչվող և ընդհանրական հասկացություններ

Ժամանակակից դպրոցի ուսուցիչը առնչվում է հետևյալ խնդիրներին՝ ի՞նչ սովորեցնել, ինչպե՞ս սովորեցնել, ինչու՞ սովորեցնել: Այս առումով առավել կարևորվում են դասավանդման այլազան մեթոդներն ու հնարները, որոնցից են խաչվող կամ ընդհանրական հասկացությունները :

Առանձնացվում են 8 հասկացություններ.

1.Օրինաչափություն

2. Պատճառ և հետևանք

3. Կառուցվածք և գործառույթ

4. Կայունություն և փոփոխություն

5. անհատներ և հարաբերություններ

6. Ժամանակ և տարածություն

7. Անհատական և մշակութային արժեհամակարգ

8. Փոփախություն և զարգացում:

Այս հասկացությունները հնարավորություն են տալիս

ա) նույն երևույթը հետազոտել տարբեր տեսանկյուններից,

բ) ըմբռնել աշխարհի միասնականությունը և ամբողջականությունը,

գ) զարգացնել վերլուծական միտքը և քննադատական մտածողությունը,

դ) իրականացնել տարբեր նախագծեր,

ե) նպաստել վերջնարդյունքի ապահովմանը:

Սրանք առանցքային գաղափարներ են, որոնք ընդհանրական են տարբեր գիտությունների համար և օգնում են սովարաղներին՝ միավորվելու տարբեր առարկաներից ձեռք բերած գիտելիքները:

Անհնար է պլանավորել ինտեգրված դաս՝ առանց կիրառելու այս հասկացությունները:

5. Ինտեգրված դասի պլանավորումը

Միջառարկայական կապ կարելի է ապահովել և՛ ողջ դասի ընթացքում՝ համագործակցելով հարակից առարկայի (առարկաների) ուսուցչի (ուսուցիչների) հետ, և՛ դասի որևէ փուլում՝ նախապես ուսումնասիրելով հարակից նյութը:

Դասը ամեն դեպքում վարում է ուսուցիչը, իսկ համատեղվող առարկայի ուսուցիչը կա՛մ կարող է մասնակից լինել որևէ փուլում (դա, անշուշտ, հետաքրքրություն և աշխուժություն կհաղորդի դասին), կա՛մ կարող է մասնակցել

որպես հյուր: Նման դասերի ժամանակ առավել ակտիվ են աշակերտները՝ որպես անմիջական մասնակից, կատարող և ստեղծագործող: Այս դեպքում սովորելը դառնում է միջոց և ոչ նպատակ:

6. Միջառարկայական կապերի ապահովումը մայրենիի, հ. լեզվի և հայ գրականության դասերին

Ժամանակակից դեռահասին հազիվ թե հնարավոր է ինչ-որ բանով զարմացնել, քանի որ իրեն հետաքրքրող ցանկացած նյութ հասանելի է համացանցում: Սակայն ոչ բոլոր դեպքերում է ստացվում գտածը արդյունավետորեն համակարգել՝ ըստ պատճառհետևանքային կապերի, համադրել փաստերը և անել հետևություններ: Նման իրավիճակների լավագույն լուծումը ինտեգրված դասն է, որին ուսուցիչը պետք է պատրաստվի մեծագույն պատասխանատվությամբ, որպեսզի հասնի ակնկալված վերջնարդյունքին:

Իմ աշխատանքային գործունեության ընթացքում բազմիցս եմ համոզվել,

որ Հ. լեզվի և Գրահկանության ուսուցիչը մասամբ նաև մաթեմատիկ է և ֆիզիկ, բնագետ և արվեստաբան, պատմագետ և հոգեբան:

Հատկապես գրականության դասերին է հարկ լինում ապահովել միջառարկայական կապ, որը հետաքրքրություն և աշխուժություն է հաղորդում դասին:

Առավել հետաքրքիր են այն դասերը, երբ կան նաև հյուրեր (մասնագետներ), որ հարկ եղած դեպքում նաև դառնում են մասնակից:

Ինտերակտիվ դասի ուսանելի օրինակներ են Մայրենի առարկայից 5-րդ դասրանում <<Հայրենի անտառներ>> (ըստ Մ. Ղուկասյանի) և 6րդ դասարանում <<Ո՞ր է կղզյակն Սևանա>>(ըստ Մ. Ղուկասյանի) դասանյութերը:

Երկու դեպքում էլ խմբերին նախապես հանձնարարվել էր մի դեպքում ներկայացնել անտառի անհետացման, իսկ մյուս դեպքում՝ Սևանի ճահճացման հիմնախնդիրները:

Միջառարկայական կապերն ապահովվել էին՝ հրավիրելով մի դեպքում աշխարհագրության և կենսաբանության, մյուս դեպքում քիմիայի և կենսաբանության ուսուցիչների:

Երկու թեմաների ուսումնասիրման ընթացքում էլ կիրառվել է դասի կառուցման նույն մեթոդաբանությունը:

Սկզբում <<Հասկացությունների քարտեզ>> մեթոդով վեր են հանվել անտառին և Սևանա լճին առնչակից հասկացությունները:


Էլեկտրաէներգիա
Մշակովի հաղերի ոռոգում
Բուսական աշխարհ
Ձկնատեսակներ
Ջրային պաշար
Բարիքներ
Սևանա լիճ
Քաղցրահամ ջուր
Տուրիզմ
Օդի խոնավություն



2. Վենի դիագրամով համեմատվել են դասանյութերի հեղինակների և աշակերտների դիտարկումները.

1. աշակերտներ հեղինակ





2. ըստ աշակերտների Ըստ հեղինակի

Սահիկաշարով ներկայացվել են Հայաստանի անապատացման և Սևանի ճահճացման հիմնախնդիրները հրավիրված մասնագետների մեկնաբանությամբ և հիմնավորմամբ:

Այնուհետև <<Ապագայի անիվ>> մեթոդով ներկայացվել են այսօրվա հրատապ խնդիրները, դրանց պատճառները և հետևանքները խաչվող և ընդհանրական հասկացությունների կիրառմամբ:

1.


Հետևանք
Հայաստանը կջրազրկվի և կդառնա անապատ
Հիմնախնդիր
Սևանը ճահճանում է
Պատճառ
Աղտոտվածություն, անոթնա շահագործում



Վերջում խմբերին առաջարկվել է գրել պաշտոնական նամակներ բնապահպանական կառույցներին, ինչը արվել է մեծագույն ոգևորությամբ և պատասխանատվությամբ: Նամակներն, իհարկե, ուղարկվել են և մնացել անպատասխան:

Արդյունքում կատարվել է ճանաչողական և դաստիարակչական մեծ աշխատանք:

Հայ գրականություն առարկայից կազմակերպել եմ դաս $X^{բ}$ դասարանում Գ. Նարեկացու <<Մատյան ողբերգության>> պոեմն ուսումնասիրելիս:

եկեղեցու հովիվ տեր Դավիթ Սահակյանին: Խմբերին նախապես հանձնարարված է եղել ունենալ մեղք և ապաշխարություն բառերի բացատրությունը և պաստառի վրա՝ Աստծո 10 պատվիրանները:

Ցուցապաստառին՝

2.



Բաց հարցերի օգնությամբ կապ է հաստատվել ժամանակաշրջանի քաղաքական-հասարակական վիճակի և Նարեկացու հարցադրումների միջև՝ ապահովելով միջառարկայական կապ պատմություն և ՀԵՊ առարկաների հետ, որոնցից ունեցած գիտելիքները առավել մոտիվացնող արժեք ունեին: Իսկ հոգևոր հովվի հետ ծավալվեց Խաչաձև հասկացություններով երկխոսություն- բանավեճ մարդու մեղսավոր էության,

ապաշխարանքի և մաքրագործման ձգտումի, աստվածային կատարելության հասնելու ուղիների, բայց և դրա անհնարինության շուրջ, քանզի մարդն իր էությամբ մեղսական է, իսկ կատարելության ձգտումը՝ հավերժական:

Դասը կայացած էր, աշակերտները՝ հոգով մաքրված ու մոտիվացված ավելի լավը դառնալու:

Հայ գրականության ամենաբարդ թեման հասկանալի դարձավ՝ շնորհիվ ինտեգրված մոտեցման:

Հ. լեզվի դասաժամերին միշտ չէ, որ հնարավոր է ապահովել միջառարկայական կապ, չնայած այդ կապը մշտապես առկա է:

Ինտեգրման հնարավորություն ընձեռում է հատկապես բառագիտություն բաժինը՝ շեշտելով լեզուների առնչակցությունները հնդեվրոպաբանության շրջանակում:

10-րդ դասարանում Բառակազմություն թեման ուսումնասիրելիս համեմատում ենք արմատական բառերի ընդհանրությունները հայերենում, ռուսերենում, անգլերենում: Առավել հետաքրքիր է ստացվում Դարձվածքներ թեմայի ուսումնասիրությունը: Նախապես խնդրում եմ ռուսերենի և անգլերենի մասնագետներին համապատասխան դարձվածքների օրինակներ դուրս բերել գեղարվեստական գրականությունից : Աշակերտներին ևս հանձնարարվում է տրված դարձվածքները մեկնաբանել, պատկերազարդել և գրել մեկ այլ հոմանիշ դարձվածք: Հետո էկրանին հայտնվում են տվյալ դարձվածքների եռալեզու տարբերակները և մեջբերումներ գեղարվեստական գրականությունից:

Հայերեն	Ռուսերեն	Անգլերեն
1. Ինչպես ձուկը ջրում:	Как риба в воде.	Like a duke a water.
2. Ծայրը ծայրին հասցնել:	Свободить концы с концами.	Make ands meet.
3. Աչքին թաց փչել:	Пускать пыть в глаза.	Moke and mirrors.
4. Արգելված պտուղ:	Запретный плод.	Forbidden fr

Արդեն կշռադատման փուլում խմբերը հիմնավորում են դարձվածքների առանձնահատկությունները տարբեր լեզուներում:

Մոտիվացիայի արդյունքում խթանվում է աշակերտների հետաքրքրասիրությունը դարձվածքների, լեզուների, աշխարհը համեմատության մեջ բացահայտելու կարողունակությունների դրսևորման հանդեպ:

Այսպիսով՝ ճիշտ նախանշված նպատակների, հանգմանալից պլանավորման և արդյունավետ մեթոդների կիրառման արդյունքում զարգանում են աշակերտների կարողունակությունները, և ապահովվում է ակնկալված վերջնարդյունքը:

7. Եզրակացություն

Միջառարկայական կապերով հագեցած դասերը արդյունքում ծառայում են նախանշված նպատակներին.

- Սովորողը ստանում է ամբողջական գիտելիք.
- Ձևավորվում է քննադատական մտածողություն.
- Նպաստում է լեզվական գիտելիքների խորացմանը.
- Դաստիարակվում է պատասխանատվություն, ազնվություն, հարգանք.
- Խորացվում են թվային գիտելիքները.
- Ստացված գիտելիքները կիրառվում են գործնականում:

Այսպիսով՝ միջառարկայական կապերի ապահովումը Հայոց լեզվի և Գրականության ժամերին էապես նպաստում է սովորողների լեզվական և մշակութային կարողունակությունների զարգացմանը, այլ առարկաների նկատմամբ հետաքրքրության առաջացմանը, առարկաների միջև խաչվող ընդհանրություններ գտնելուն, անհատական դիրքորաշում և արժեհամակարգ ձևավորելուն:

8. Գրականության ցանկ

1. Հանրակրթության չափորոշիչ և ծրագրեր 1-12-րդ դասարաններ,
2. Համահայկական գիտաժողովի նյութերի ժողովածու (5րդ կրթական գիտաժողով)
3. Դասագիրք- Մայրենի 5-րդ դաս., Մայրենի 6-րդ դաս., Հ, լեզու 10-րդ դաս., Հայ գրականություն 10-րդ դաս.,
4. Ա. Խաչատրյան <<ՈՒսուցման արդյունավետ հնարներ>> Երևան 2020,
5. Յու. Ամիրջանյան, Ա. Սահակյան. <<Մանկավարժություն>>
6. Յու. Կոմենսկի <<Մեծ դիդակտիկա>>
7. Դավթյան <<Ինտեգրված ուսուցում>>2007